


ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Տեղեկատվական ամփոփագիր իրավաբանական անձանց համար



Հրապարակման ամսաթիվ՝ փետրվար 2023:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Գործող պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայքը՝ www.business.hsbc.am կամ զանգահարեք +374 60 655 200 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից:



ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:

Առևտրավարկային ծառայությունները տրամադրվում են ռեզիդենտ իրավաբանական անձանց, մինչդեռ ոչ-ռեզիդենտ ընկերությունները ֆինանսավորվում են ընտրանքային կարգով:

Առևտրավարկային գործիքները տրամադրվում են գործունեության բավարար պատմություն ունեցող հաճախորդների (մեկ տարուց ավել անընդմեջ գործունեություն):

Մեր նվիրված վարկային մենեջերների թիվը տրամադրում է անհատական մոտեցում՝ միաժամանակ համագործակցելով մեր հաճախորդների հետ՝ օգնելով նրանց հասնելու իրենց ռազմավարական նպատակներին և հավակնություններին:

Սույն տեղեկատվական ամփոփագրում ներկայացված են առևտրավարկային ծառայությունների պայմանների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, իսկ առավել մանրամասն Ձեզ հետաքրքրող գործարքը քննարկելու համար, ինչպես նաև դիմել Բանկի Կորպորատիվ Բիզնեսի դեպարտամենտի ներկայացուցիչներին:

Առևտրավարկային ծառայությունները մատուցվում են գլխամասային գրասենյակի կողմից. հասցե՝ Տերյան փողոց 66, Երևան 0009, ՀՀ, հեռախոսահամար՝ +374 60 655 200:

Բովանդակություն

Ծառայություններ	4
Ընդհանուր պայմաններ.	5
Վճարներ	10
Փաստաթղթեր	12
Հավելված 1.	14
Հավելված 2.	14

Ծառայություններ

Վարկավորում

Մենք առաջարկում ենք երկարաժամկետ և կարճաժամկետ վարկեր, որոնք նախատեսված են Ձեր բիզնեսի ֆինանսավորման պահանջների բավարարման համար: Օգտագործեք մեր ֆինանսավորման լուծումները կապիտալ ներդրումների, շրջանառու միջոցների համալրման և ընթացիկ ծախսերի իրականացման համար՝ բիզնեսի զարգացման և արդյունավետ կառավարման նպատակով:

• Ժամկետային վարկեր

Բանկը տրամադրում է վարկեր տարբեր նպատակներով: Բանկը կարող է տրամադրել կապիտալ ֆինանսավորման վարկ, որը նախատեսված է կապիտալ ներդրումների համար՝ ֆիքսված ժամկետով (սովորաբար մինչև 5 տարի): Նման ֆինանսավորումը Դուք կարող եք օգտագործել հիմնական միջոցների/անշարժ գույքի ձեռք բերման, կառուցման, վերակառուցման, վերանորոգման և վերագինման համար, որի վերջնական նպատակը բիզնեսի ընդլայնումն է կամ նոր բիզնես ուղղությունների ստեղծումը: Վարկեր կարող են տրամադրվել նաև շրջանառու կապիտալում միանվագ ներդրում կատարելու կամ այլ նպատակների համար:

• Վարկային գծեր

Վարկային գծերը վերականգնվող սահմանաչեղ ֆինանսական գործիքներ են, որոնք սովորաբար օգտագործվում են շրջանառու կապիտալի համալրման նպատակով և տրամադրվում են ֆիքսված (սովորաբար մինչև 3 տարի) ժամկետով՝ տարեկան վերանայման պայմանով: Դուք կարող եք օգտագործել գործիքը հաստատված սահմանաչափի շրջանակներում՝ հետագայում մարելով մի քանի ամսական վճարումների միջոցով՝ համապատասխան պայմանագրով սահմանված կարգով: Վարկային գծերը սովորաբար օգտագործվում են մատակարարների և վճարումներ կատարելու, ինչպես նաև շրջանառու միջոցներում այլ ներդրումներ կատարելու նպատակով:

• Օվերդրաֆտ

Օվերդրաֆտը վերականգնվող սահմանաչափով ֆինանսական գործիքի

տարատեսակ է, որը Վարկառուին տալիս է համապատասխան արժույթով ընթացիկ հաշվին բացասական մնացորդ ունենալու հնարավորություն: Սահմանաչափը տրամադրվում է ֆիքսված (սովորաբար մինչև 3 տարի) ժամկետով՝ տարեկան վերանայումների պայմանով: Օվերդրաֆտը նախատեսված է Ձեր դրամական միջոցների կարճաժամկետ կարիքները հոգալու համար: Օվերդրաֆտի միջոցով հնարավոր է ծածկել բիզնեսի ամենօրյա գործունեության ընթացքում առաջացող դրամական միջոցների ժամանակավոր պակասը և ավելի արդյունավետ կառավարել բիզնեսի դրամական հոսքերը, հատկապես, արտահայտված սեզոնայնություն ունեցող բիզնեսների պարագայում:

• Կորպորատիվ կրեդիտ քարտեր

Օգտագործե՞ք կորպորատիվ կրեդիտ քարտերն ամենօրյա բիզնես ծախսերի համար: Այն արագ, հարմար և հուսալի գործիք է, որի միջոցով կարող եք տարատեսակ վճարումներ կատարել ինտերնետի և վաճառքի կետերի (POS-տերմինալների) միջոցով, ինչպես նաև կանխիկացնել և կատարել փոխանցումներ մի քարտային հաշվից մեկ այլ քարտային հաշվին: Կորպորատիվ կրեդիտ քարտերն օգտագործվում են ընկերության տնօրինության, ինչպես նաև համապատասխան լիազորություններ ունեցող աշխատակիցների կողմից, ովքեր կարող են ընկերության կորպորատիվ քարտից ունենալ լրացուցիչ քարտեր կիսելի սահմանաչափով՝ տարբեր տեսակի վճարումներ կատարելու նպատակով: (Սովորաբար կորպորատիվ կրեդիտ քարտերի սահմանաչափերը կազմում են 50.000 ՀՀ դրամից մինչև 5.000.000 ՀՀ դրամ առանց ապահովածության քարտերի

դեպքում և 1.000.000 ՀՀ դրամից մինչև 20.000.000 ՀՀ դրամ՝ ապահովածություն ունեցող քարտերի դեպքում): Կորպորատիվ կրեդիտ քարտերը սովորաբար տրամադրվում են մինչև 3 տարի ժամկետով, որը ենթակա է տարեկան վերանայման:

Վարկային քարտերի ամբողջական պայմանները և սակագները ներկայացված են «Քարտային ծառայությունների տրամադրման պայմաններ» տեղեկատվական ամփոփագրում, ինչպես նաև **business.hsbc.am** կայքում:

• Ընդհանուր սահմանաչափեր

Առևտրավարկային տարբեր գործիքները կարող են ընդգրկվել մեկ ընդհանուր սահմանաչափի ներքո: Վերջինս կարող է ներառել արտահանման/ներմուծման գործիքներ՝ փաստաթղթային ակրեդիտիվներ և ինկաստներ, տարբեր տիպի բանկային երաշխիքներ, վարկային գծեր, օվերդրաֆտներ, կրեդիտ քարտեր և առևտրավարկային այլ գործիքներ: Ընդհանուր սահմանաչափը Ձեզ հնարավորություն կտա սահմանաչափով նախատեսված առևտրավարկային գործիքները ստանալ կարճ ժամկետում:

Ընդհանուր պայմաններ

Վարկավորման գումարը, արժույթը և տրամադրման կարգը

Առևտրավարկային ծառայությունների նվազագույն սահմանաչափեր չեն կիրառվում: Հաճախորդին տրամադրվող սահմանաչափը որոշվում է հիմնականում՝ նկատի առնելով հաճախորդների կարիքները, ֆինանսական վիճակից, ապահովությունից, դրամական միջոցների հոսքից, ինչպես նաև վարկի նպատակից:

Առևտրավարկային ծառայությունները տրամադրվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով: **Արտարժույթի փոխարժեքի**

Առևտրի ֆինանսավորման ծառայություններ

Լիսենզիվ միջազգային առևտրի ոլորտում մասնագիտացած խոշոր բանկ և կազմակերպություն՝ HSBC-ն կարող է առաջարկել առևտրի ֆինանսավորման բազմաառնական ծառայություններ աշխարհի շատ երկրներում՝ նպաստելով Ձեր բիզնեսի զարգացմանը: Մեր փորձառու մասնագետներն ու խորհրդատուները Ձեզ հետ միասին կմշակեն առևտրի ֆինանսավորման լուծումների հատուկ փաթեթ՝ նախատեսված Ձեր կազմակերպության կարիքների համար: Բանկն առաջարկում է առևտրի ֆինանսավորման բազմաբնույթ ծառայություններ, ներառյալ ակրեդիտիվներ, ինկաստներ, բանկային երաշխիքներ և այլն:

Առևտրի ֆինանսավորման ծառայությունները և սակագները մանրամասն ներկայացված են համառոտ տեղեկատվական ամփոփագրերում, ինչպես նաև ինտերնետային կայքում **business.hsbc.am**:

տատանումները կարող են բացասական ազդեցություն ունենալ վարկի մարման գումարի վրա (ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկերի դեպքում):

Վարկային ծառայության գումարը տրամադրվում է անկանխիկ՝ մուտքագրելով Հաճախորդի Բանկում սպասարկվող համապատասխան ընթացիկ հաշվին կամ, օվերդրաֆտի դեպքում, Հաճախորդի ընթացիկ հաշվի բացասական մնացորդ թույլատրելու միջոցով:

Տոկոսադրույքը

Գնագոյացումն իրականացվում է՝ հաշվի առնելով ռիսկ և եկամտաբերություն հարաբերակցությունը, ինչպես նաև ֆինանսական շուկայի արդի պայմանները: Ընդհանուր առմամբ, գնագոյացումը կախված է գործիքի նպատակից, գումարից, ժամկետից, Հաճախորդի վարկային պատմությունից, առաջարկվող ապահովվածությունից, ֆինանսական, գործառնական, այլ բնույթի ռիսկերի մակարդակից, շուկայում գործող տոկոսադրույքներից, Հաճախորդի ֆինանսական հաշվետվությունների որակից, հուսալիությունից, ինչպես նաև Հաճախորդի կողմից Բանկի այլ ծառայությունների օգտագործման աստիճանից (արտարժույթային գործարքներ, հաշվի մնացորդ, միջազգային փոխանցումներ, միջազգային առևտրի ֆինանսավորման պրոդուկտներ): Անվանական տոկոսադրույքը սահմանվում է պայմանագրային հիմունքներով:

Առևտրավարկային ծառայությունները հիմնականում տրամադրվում են լողացող տոկոսադրույքով, որը սահմանվում է HSBC Բանկ Հայաստանի հաշվարկային տոկոսադրույքին գումարելով հաստատուն տոկոսային մարժա: **Բանկի հաշվարկային տոկոսադրույքը լողացող տոկոսադրույք է, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի կողմից՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելով: Գործող հաշվարկային տոկոսադրույքի չափի մասին տեղեկությունները մշտապես հասանելի են [hsbc.am կայքում **https://www.hsbc.am/hy-am/pdfs/important-information/base-rate/**](https://www.hsbc.am/hy-am/pdfs/important-information/base-rate/), ինչպես նաև **Բանկի մասնաճյուղերում, ինչը համարվում է պատշաճ ծանուցում:****

Տոկոսագումարի հաշվարկման և վճարման կարգը

Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ համապատասխան վարկային ծառայության մայր գումարի փաստացի մնացորդի նկատմամբ՝ վարկային գործիքի արժույթով, եթե այլ համաձայնություն չկա Հաճախորդի և Բանկի միջև: Տոկոսագումարի հաշվարկի համար հիմք է ընդունվում 360 օր օրացուցային տարին:

Տոկոսագումարների մարումը կատարվում է ՀՀ դրամով՝ յուրաքանչյուր ամսվա 25-րդ օրվա դրությամբ (հաջորդ աշխատանքային օրը, եթե 25-ը ոչ աշխատանքային օր է), եթե այլ համաձայնություն չկա Հաճախորդի և Բանկի միջև:

Մարման ժամանակացույցը

Մարման ժամանակացույցը համապատասխանեցվում է դրամական միջոցների հոսքին, հաճախորդների բիզնեսի կարիքներին, ծրագրի տեսակին, Բանկի ռիսկի ախորժակին: Հնարավոր է նաև վճարման առավել ճկուն ժամանակացույց և/կամ մարումների այլ հաճախականություն՝ հաշվի առնելով անհատապես յուրաքանչյուր Վարկառուի բիզնեսի

առանձնահատկությունները և դրամական հոսքերի սեզոնայնությունը:

Վաղաժամկետ մարման վճարները, նվազեցման ենթակա և ոչ ենթակա վճարները սահմանվում են յուրաքանչյուր հաճախորդի և գործիքի համար անհատապես:

Որպես կանոն, բանկը կիրառում է վաղաժամկետ մարման տուգանք բոլոր այն դեպքերում, երբ հաճախորդը վաղաժամկետ մարում է կատարում Բանկի չվաստակած տոկոսները փոխհատուցելու համար՝ վարկի

վաղաժամկետ մարման պատճառով հաշվարկված ժամանակի և ռեսուրսների հիման վրա, որոնք անհրաժեշտ են վաղաժամկետ մարված միջոցների վերաներդրման համար:

Ապահովվածությունը

Չնայած ապահովման միջոցի առկայությունը համապատասխան վարկային ծառայության տրամադրման մասին որոշում կայացնելիս առաջնային գործոն չի համարվում, պատշաճ ապահովվածությունը կարևոր է:

Բանկի համար ընդունելի են վարկային ծառայության ապահովման հետևյալ միջոցները՝

- Առևտրային, արտադրական կամ բնակելի Նշանակության անշարժ գույք
- Մեքենասարքավորումներ և ավտոտրանսպորտային միջոցների
- Ապրանքանյութական պաշարներ
- Առանձնացված հաշվի վրա ստեղծված դրամական միջոցների կամ գրավադրված ժամկետային ավանդների տեսքով ապահովում
- Առաջնակարգ բանկի կամ կազմակերպության երաշխիք
- Շահագրգիռ անձանց անձնական երաշխիքներ
- Փոխկապակցված ընկերությունների և իրավաբանական անձանց երաշխիքներ
- Պետական երաշխիքներ
- Արժեթղթեր, ներառյալ ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի
- Ապահովման այլ միջոցներ, որոնք կարող են ընդունելի համարվել՝ ըստ վարկի և ռիսկի ախորժակի

Վարկային ծառայության ապահովման միջոցների և վարկային ծառայության գումարի միջև հարաբերակցության ընդունելի մակարդակը որոշվում է՝ հաշվի առնելով Հաճախորդի վարկային պատմությունը, տրամադրվող վարկային ծառայության/ֆինանսավորման գործիքի գումարը, ապահովման միջոցի տեսակը,

անկախ անուղիտորական կազմակերպության եզրակացությամբ ուղեկցվող ֆինանսական հաշվետվությունների առկայությունը, ռիսկի և եկամտաբերության նկատառումները, ինչպես նաև առաջարկվող ապահովման միջոցի իրացվելիության մակարդակը:

Բանկի օգտին գրավադրված գույքը պետք է գնահատվի Բանկի համար ընդունելի անկախ գնահատողներից որևէ մեկի կողմից և պետք է ապահովագրվի Բանկի համար ընդունելի ապահովագրական ընկերություններից որևէ մեկի կողմից՝ գույքի շուկայական արժեքի չափով:

Բանկի համար ընդունելի ապահովագրական ընկերությունների և անշարժ գույքի անկախ գնահատողների ցանկը կարող եք գտնել Հավելված 2-ում և մեր ինտերնետային կայքում՝ www.business.hsbc.am.

Գույքի գնահատման ծառայության արժեքը տատանվում է՝ կախված գույքի տեսակից և առանձնահատկություններից: Բանկը պահանջում է նաև տարեկան վերագնահատում: Գնահատման հանձնարարականը ներկայացվում է Բանկի կողմից, և գնահատման արժեքը գանձվում է Հաճախորդի հաշվից գնահատողի կողմից տրամադրված հարկային հաշվի հիման վրա:

Ապահովագրության սակագները կարող են տատանվել՝ կախված ապահովագրվող օբյեկտի առանձնահատկություններից, ապահովագրական ծածկույթի բնույթից, շուկայի ընդհանուր զարգացումից, ինչպես նաև ապահովագրական ընկերության և հաճախորդի միջև բանակցությունից:

Ապահովագրական վկայագիրը պետք է վերակնքվի յուրաքանչյուր տարի՝ վարկային ծառայության գործողության ժամկետի ողջ ընթացքում: Եթե Հաճախորդը չի ապահովում գրավի առարկայի ապահովագրության վերակնքումը, ապա Բանկը կվերանկնքի այն՝ գանձելով համապատասխան վճարը Վարկառուի հաշվից:

Տեղեկատվություն երաշխավորի համար

Երաշխավորություն տրամադրելիս երաշխավորը պետք է գիտակցի երաշխավորության տրամադրման հետևանքները, այդ թվում՝ պարտապանի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում պարտավորության, տույժերի ու տուգանքների ամբողջական կատարումը երաշխավորի կողմից, վարկառուի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում երաշխավորի վարկային պատմության վատանալը, ընդհուպ մինչև երաշխավորի գույքից գրկվելը:

Բանկը պարտավոր է՝

- Տրամադրել վարկային, երաշխավորության պայմանագրերի, մարման գրաֆիկի ընտրանակը կամ պատճենը՝ «Բևոթիակի հետ ճիշտ է» մակագրմամբ և անհատական թերթիկ,
- Տրամադրել վարկի մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն,
- Հաղորդակցումն իրականացնել երաշխավորի կողմից ընտրված եղանակով՝ փոստային կամ էլ.փոստի միջոցով,
- 7 աշխատանքային օր առաջ ծանուցել պայմանագրի պայմանների փոփոխության մասին,

Ընդ որում՝

- Բացասական փոփոխության դեպքում Բանկը պարտավոր է ներկայացնել առաջարկ, երաշխավորն այն ընդունում է կամ ոչ:
- Դրական փոփոխության կամ նախապես տրված համաձայնության դեպքում Բանկը պարտավոր է ծանուցել փոփոխությունը հաստատելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
- 1 օր առաջ հիշեցնել անկա պարտավորության վերաբերյալ,
- Վարկի մարման ուճացման դեպքում՝ ամենաուշը 1 օր հետո Ձեզ տեղեկացնել այդ մասին:
- Պայմանագրի դադարեցման մասին տեղեկացնել 7 աշխատանքային օրվա ընթացքում:
- Վճարման պահանջ ներկայացնելու դեպքում պետք է կշի գումարը և տրամադրի նվազագույնը 7 աշխատանքային օր վճարման համար:

Դուք իրավունք ունեք՝

- Ցանկացած ժամանակ Բանկից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին,
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Վարկավորման մասին որոշման կայացման գործունեները և վարկային ծառայության տրամադրման ժամկետները

Ընդհանուր առմամբ, վարկավորման վերաբերյալ դրական/բացասական որոշման կայացման չափանիշները կախված են ֆինանսական գնահատականից, գործիքի նպատակից, գումարից, ժամկետից, Հաճախորդի վարկային պատմությունից, առաջարկվող ապահովվածությունից, ֆինանսական, գործառնական ռիսկերի մակարդակից, Հաճախորդի ֆինանսական հաշվետվությունների որակից, հուսալիությունից և յուրաքանչյուր Հաճախորդի/գործիքի համար որոշվում են անհատապես:

Վարկավորման մասին որոշման կայացման ժամկետը կախված է գործի բարդությունից, պահանջվող տեղեկատվության և փաստաթղթերի տրամադրման ժամկետից և որակից, պրոդուկտի տեսակից, քանակից, ժամկետից և առավելագույնը 30 աշխատանքային օր է՝ վարկային դիմումի հետ կապված Բանկի կողմից պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը ստանալուց հետո: Որոշ դեպքերում, հաշվի առնելով գործարքի առանձնահատկությունները, հնարավոր է վարկավորման մասին որոշման կայացման առավել երկար ժամկետ: Վարկային հայտ ներկայացնողին որոշման

մասին կտեղեկացվի համապատասխան որոշման կայացման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում վարկային մենեջերի միջոցով:

Վարկը Վարկառուին տրամադրվում է վարկի հետ առնչվող բոլոր պայմանագրերը կնքելուց, ապահովման միջոցները Բանկի օգտին գրավադրվադնելուց և, անհրաժեշտության դեպքում, պայմանագրերը նոտարապես վավերացնելուց և համապատասխան պետական մարմինների կողմից գրանցելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:


Վարկը ունի

1. **Վարկառուի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու կամ թերի կատարելու դեպքում՝ այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական Բանկի վարկային ռեգիստր և ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ:**
2. **Հաճախորդի կողմից համապատասխան պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները խախտելու դեպքում Բանկն իրավունք ունի պահանջների բավարարում ստանալ Հաճախորդի կողմից տրամադրված ապահովման միջոցների հաշվին:**
3. **Վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Վարկառուի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:**
4. **Բանկն իրավունք ունի պահանջելու պարտավորությունների վաղաժամկետ ամբողջական մարում, կամ որպես պարտավորությունների ապահովում՝ գրավ դրված գույքի բռնագանձում Հաճախորդի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում անկախ Հաճախորդի մեղավորության առկայությունից և/կամ անհաղթահարելի ուժի գործողությունից:**

5. Եթե Բանկի նկատմամբ ունեք չմարված պարտավորություն, ապա Ձեր կողմից պարտավորությունները կատարելու դեպքում մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝

- **Տոժանք**
- **Տոկոսագումարներ**
- **Մայր գումար**

Ընդհանուր պայմանների մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել Բանկի առևտրավարկային ղեկարարման տի ներկայացուցիչներին կամ այցելել Բանկի ինտերնետային կայքը՝ business.hsbc.am:



Վճարներ

Այս բաժնում ներկայացված են վճարների ուղենիշային արժեքները, որոնցով Բանկն առաջնորդվում է առևտրային ֆինանսավորման ծառայություններ տրամադրելիս, իսկ ցանկացած ծառայության/գործարքի վերջնական պայմանները սահմանվում են պայմանագրային սկզբունքով:

Վճարի տեսակը	Նկարագրություն	Սակագին
Վարկի տրամադրման վճար	Հաստատված վարկի տրամադրման պահին (վարկային գծերի և օվերդրաֆտների դեպքում, յուրաքանչյուր տարի՝ ծառայության վերանայման ժամանակ) միանվագ գանձվող գումար	Վարկի գումարի 0.5%-ը չգերազանցող գումարի չափով: Վարկերի դեպքում այս վճարը գանձվում է մեկ անգամ՝ վարկի տրամադրումից առաջ, իսկ վարկային գծերի և օվերդրաֆտների դեպքում, որոնք իրենցից ներկայացնում են 1 տարեկան վերաթողարկվող ծառայություններ, վճարը գանձվում է մեկ անգամ՝ ծառայության տրամադրման պահին և յուրաքանչյուր տարի՝ ծառայության վերանայման ժամանակ:
Վարկի սպասարկման/ մոնիտորինգի տարեկան վճար	Հաճախորդի վարկային ծառայությունների տարեկան վերանայման համար գանձվող վճար	Մինչև 500,000 ՀՀ դրամ
	Հաստատված կամ տրամադրված վարկային ծառայության պայմանների փոփոխության դեպքում գանձվող վճար	Մինչև 500,000 ՀՀ դրամ
Վարկային գծի չօգտագործման տուգանք	Այս տուգանքի նպատակն է Հաճախորդին տրամադրված վարկային գծերի չօգտագործման հետևանքով Բանկի չվաստակած եկամտի մի մասի փոխհատուցումը	Չօգտագործված գումարի նկատմամբ մինչև 2% տարեկան տոկոսադրույքով հաշվարկված տուգանք. գանձվում է ամսական, եթե այլ համաձայնություն Հաճախորդի և Բանկի միջև առկա չէ: Օգտագործման նվազագույն սահմանաչափի ամրագրում, որից ցածր օգտագործման դեպքում վարկային ծառայության գործող տոկոսադրույքը կիրառվում է այդ սահմանաչափի և փաստացի օգտագործված գումարի տարբերության նկատմամբ (այդ դեպքում, հաշվարկը սովորաբար կատարվում է տարեկան կտրվածքով, եթե այլ համաձայնություն Հաճախորդի և Բանկի միջև առկա չէ):
Վարկի վաղաժամկետ մարման տուգանք	Այս տուգանքի նպատակն է Հաճախորդին տրամադրված վարկի վաղաժամկետ մարման հետևանքով Բանկի չվաստակած եկամտի մի մասի փոխհատուցումը	Տուգանքը կարող է կազմել չստացված տոկոսագումարի մինչև 50%-ը

Նախապայմանների խախտման տուգանքներ	Առևտրավարկային ծառայությունների տրամադրման պարտադիր նախապայմանների և/կամ պայմանների (ներառյալ գրավի ապահովագրության ժամանակին ապահովման պահանջի) խախտման համար կարող են սահմանվել տուգանքներ	Պարտադիր նախապայմանների և/ կամ պայմանների չկատարման դեպքում գանձվող տուգանքները սովորաբար սահմանվում են՝ որպես վարկային ծառայության որոշակի տոկոս (մինչև վարկի/ծառայության գումարի 0.5%-ը և յուրաքանչյուր դեպքի համար ոչ ավելի, քան 500,000 ՀՀ դրամ)
Տուժանք	Պայմանագրով նախատեսված ժամկետներում հիմնական գումարի և/կամ հասանելիք որևէ տոկոսագումարի վճարումները չկատարելու դեպքում Հաճախորդից գանձվող տոկոսագումար	Գործիքի տոկոսադրույք + 10%

Նշում

Հաճախորդը պարտավորվում է վճարել իրավաբանական ձևակերպումների հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում՝ գրավի պայմանագրերի նոտարական վավերացման և գրավի իրավունքի գրանցման հետ կապված վճարները: Ստորև ներկայացված են գրավի առարկայի նոտարական վավերացման և պետական գրանցման վճարների մոտավոր չափերը, սակայն պետք է հաշվի առնել, որ որոշ դեպքերում վճարները կարող են գերազանցել նշված միջակայքը՝ պայմանավորված գործարքի առանձնահատկություններով: Վճարների միջակայքերը և առավելագույն շեմերը սահմանվում են համաձայն՝ ՀՀ օրենքը «Նոտարիատի մասին» և ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին»:¹

Գրավի Տեսակը	Նոտարի տուրք	Կադաստրի (էլեկտրոնային գրանցում)/ՃՈ վճար
Անշարժ գույքի/հողամասի հիփոթեք	մինչև 15,000 ՀՀ դրամ	26,039 ՀՀ դրամ (26,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար)
Եռակողմ անշարժ գույքի գրավի պայմանագիր	մինչև 20,000 ՀՀ դրամ	71,107 ՀՀ դրամ (71,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար) (գրավի իրավունքի և սեփականության իրավունքի գրանցում)
Եռակողմ ավտոմեքենայի գրավի պայմանագիր	մինչև 20,000 ՀՀ դրամ	2003 ՀՀ դրամ՝ գրավի իրավունքի գրանցման վճար (2,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար)
	մինչև 20,000 ՀՀ դրամ	2003 ՀՀ դրամ (2,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար)
Ավտոմեքենայի գրավ	մինչև 20,000 ՀՀ դրամ	2003 ՀՀ դրամ (2,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար)
Սարքավորման գրավ	մինչև 20,000 ՀՀ դրամ	2003 ՀՀ դրամ (2,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար)
Ապրանքային նշանի գրավ	մինչև 20,000 ՀՀ դրամ	2003 ՀՀ դրամ (2,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար)
Ապրանքակրթական պաշարների գրավ	մինչև 20,000 ՀՀ դրամ	2003 ՀՀ դրամ (2,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար)
Բաժնետոմսի/Բաժնեմասի Գրավ	մինչև 20,000 ՀՀ դրամ	2003 ՀՀ դրամ (2,000 ՀՀ դրամ +0.15% էլեկտրոնային համակարգի Պետական Վճարումների միջնորդավճար)

¹ Ըստ «Նոտարիատի մասին» օրենքի՝ կա պետական տուրք, որը գանձվում է նոտարի կողմից՝ «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն, սակայն նոտարական գործողությունների/ծառայությունների վճարը որոշվում է կոնկրետ նոտարի կողմից: Կառավարությունը տալիս է վճարների միջակայքերը և առավելագույն շեմը, որից ավել նոտարը գանձելու իրավունք չունի:

Փաստաթղթեր

Վարկային ծառայության դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Ընկերության ֆինանսական հաշվետվությունները (ներառյալ ծանոթագրությունները)՝ առնվազն նախորդ երկու տարվա համար:
- Դրամական հոսքերի կանխատեսումներ/նախորդ ժամանակաշրջանի դրամական հոսքեր/թուջե, ֆինանսական մոդել:
- Ոչ ֆինանսական տեղեկատվություն, ներառյալ մատակարարների (պայմանագրեր, պայմաններ), գնորդների, մրցակիցների, շուկայի մասնաբաժնի (արդյունաբերության վերաբերյալ տեղեկատվություն), գործառնական մոդելի, կառավարման և սեփականության կառուցվածքի մասին տեղեկատվությունը:
- Առաջարկվող ապահովության հետ կապված տեղեկատվություն:

Վարկային ծառայության հաստատումից հետո, Հաճախորդը Բանկին պետք է տրամադրի համապատասխան փաստաթղթեր վարկային և գրավի պայմանագրերի պատրաստման համար կամ ապահովի պահանջվող փաստաթղթերի և տեղեկատվության հասանելիությունը՝ կատարելով սահմանված համապատասխան վճարումները:

Հիմնական փաստաթղթերի ցուցակը ներկայացված է ստորև, սակայն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման կարգը և ժամկետները Հաճախորդներին կներկայացվի **անհատապես**, քանի որ պայմանավորված տրամադրվող վարկային ծառայության տեսակով և գրավադրվող ապահովման միջոցներով այն կարող է տարբերվել:

Իրավաբանական անձանց համար նախատեսված փաստաթղթեր	Գրավի հետ կապված փաստաթղթեր
<p>1. ՍՊԸ, Կոոպերատիվ Հիմնադրամներ</p> <ul style="list-style-type: none"> • Ընկերության կանոնադրության ճշգրիտ պատճեն, հիմնադրման փաստաթուղթը, կանոնադրության փոփոխությունները (եթե առկա են) • Ընկերության պետական ռեգիստրի վկայականի ճշգրիտ պատճեն (եթե գրանցվել է մինչև 2017 թ. մարտ ամիսը) և/կամ այլ կերպ հավաստագրված տեղեկատվություն ընկերության գրանցման և գործադիր մարմնի մասին: • Մասնակիցների, հոգաբարձուների, հիմնադիրների և (կամ) տնօրենի / գործադիր մարմնի անձնագրի/ID/ սոցիալական քարտի/ՍԲ-ի պատճեն • Պետական ռեգիստրից քաղվածքը, Ընկերության բաժնետոմսերի նկատմամբ սահմանափակումների և/կամ ծանրաբեռնվածության վերաբերյալ տեղեկությունների մասին • Ընկերության զուտ ակտիվների մասին հայտարարություն • Հարկային մարմնից տեղեկանք՝ պարտավորությունների վերաբերյալ (եթե կիրառելի է) • Գործարքի հաստատման վերաբերյալ նիստի արձանագրության և (կամ) խորհրդի որոշումը 	<p>1. Հիփոթեք</p> <ul style="list-style-type: none"> • Անշարժ գույքի սեփականության վկայականը ² • Անշարժ գույքի վկայական Կարաստրի կողմից՝ գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ (Միասնական – ուժի մեջ է 15 աշխատանքային օր) • Անշարժ գույքի ձեռքբերման հիմքերը հավաստող փաստաթղթերի պատճեն • Բոլոր ներգրավված կողմերի անձնագրերի/ID-ների, ՍԲ-ի պատճենները և, համատեղ սեփականության դեպքում, ամուսինների ամուսնության վկայականի պատճեն:

² Մինչև 2018 թվականը տրված սեփականության վկայականի դեպքում սեփականության վկայականի բնօրինակը կպահանջվի միայն առուվաճառքի գործարքների համար:

<p>2. ԲԲԸ / ՓԲԸ</p> <ul style="list-style-type: none"> • Ընկերության կանոնադրության ճշգրիտ պատճեն, հիմնադրման փաստաթուղթը, կանոնադրության փոփոխությունները (եթե առկա են) • Ընկերության պետական ռեգիստրի վկայականի ճշգրիտ պատճեն (եթե գրանցվել է մինչև 2017 թ. մարտ ամիսը) և/կամ այլ կերպ հավաստագրված տեղեկություն ընկերության գրանցման և գործադիր մարմնի մասին: • Պետական ռեգիստրից քաղվածքը, Ընկերության բաժնետոմսերի ռեգիստրը պահպանող այլ լիցենզավորված ընկերության կողմից քաղվածք բաժնետոմսերի, բաժնետոմսերի և սահմանափակումների մասին • Ընկերության տնօրենի և հաշվապահի կողմից ստորագրված և կնքված Ընկերության վերջին հաշվեկշռի կրկնօրինակը և/կամ հաստատող Նամակը • Բաժնետոմսերի և տնօրենի անձնագրի/ID/ՍԲ-ի պատճենը • Հարկային մարմնից տեղեկանք՝ պարտավորությունների վերաբերյալ (եթե կիրառելի է) • Գործարքի հաստատման վերաբերյալ նիստի արձանագրության և (կամ) խորհրդի որոշումը 	<p>2. Տրանսպորտային միջոցների գրավադրում</p> <ul style="list-style-type: none"> • Ավտոմեքենայի սեփականության վկայականի բնօրինակը • Ճանապարհային ոստիկանությունից վկայական, մեքենայի կարգավիճակի և տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ (վավեր է 5 աշխատանքային օր) • Ավտոմեքենայի տեխնիկական անձնագրի պատճեն • Բոլոր ներգրավված կողմերի անձնագրերի/ID-ների, ՍԲ-երի պատճենները և, համատեղ սեփականատիրության դեպքում, ամուսինների ամուսնության վկայականի պատճեն:
<p>3. Ֆինանսական կազմակերպություններ</p> <ul style="list-style-type: none"> • Ընկերության կանոնադրության ճշգրիտ պատճենը, հիմնադրման փաստաթղթերը, կանոնադրության փոփոխությունները (եթե առկա են) • Ընկերության լիցենզիայի ճշգրիտ պատճեն • Ընկերության տնօրենի Նշանակման որոշումը • Սեփականատերերի և տնօրենի անձնագրի/ID/ՍԲ-ի պատճենը • Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կանոնադրության և տնօրենի վերջին փոփոխությունների գրանցման վկայականը (ուժի մեջ է 30 օր) • Գործարքի հաստատման վերաբերյալ նիստի արձանագրության և (կամ) խորհրդի որոշումը 	<p>3. Շարժական գույքի գրավ (սարքավորում, արտադրական գին և այլն)</p> <ul style="list-style-type: none"> • Շարժական գույքի ամբողջական և մանրամասն ցուցակ • Հիմքեր (մաքսային հսկողության փաստաթղթեր և/ կամ հաշիվ ապրանքագիր և/կամ ցանկացած այլ փոխկապակցված փաստաթուղթ) • Բոլոր ներգրավված կողմերի անձնագրերի/ID-ների, ՍԲ-ի պատճենները և, համատեղ սեփականատիրության դեպքում, ամուսինների ամուսնության վկայականի պատճեն:
	<p>4. Անձնական / կորպորատիվ երաշխավորություն</p> <ul style="list-style-type: none"> • Երաշխավորի անձնագրի/ID-ի, ՍԲ-ի պատճենները • Կորպորատիվ երաշխավորի դեպքում կիրառվում են իրավաբանական անձանց համար սահմանված փաստաթղթերի պահանջների չափանիշները:

Կախված պահանջվող փաստաթղթերի և տեղեկատվության ցանկից՝ հաճախորդները կտեղեկացվեն դրանց ներկայացման կարգի և ժամկետների վերաբերյալ: Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Վարկային ծառայության համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ՝ այցելելով business.hsbc.am:

Հավելված 1

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել մեզ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:

Վարկային պայմանագրի գործողության ընթացքում **քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների** տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները կարող եք գտնել «Կորպորատիվ բանկային ծառայությունների սակագներ» տեղեկատվական ամփոփագրում և մեր պաշտոնական կայքէջում business.hsbc.am.

Հավելված 2

Բանկի համար ընդունելի անշարժ գույքի անկախ գնահատողների ցանկ³

«Ա.Գ. ԲՈՒՐՍԱ» ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲՈՐՍԱ	+374 (10) 252 789, +374 (10) 259 031, +374 (10) 252 230, +374 (10) 252 786 agborsa@mail.ru	ՀՀ, ք. Երևան, Նաիրի Ջառյան փող., 22 շենք
«ՎԻ ԷՄ - ԱՐ ՓԻ» ՍՊԸ	+374 (10) 588 797, +374 (99) 588 797 vm-rp@mail.ru	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող. փակուղի, 8 շենք
«ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	+374 (10) 432 276, +374 (98) 800 424, +374 (93) 500 201 amintasgroup@mail.ru	ՀՀ, ք. Երևան, Արցախի պող., 23/6 շենք
«ԱՐ ՎԻ ԷՄ ԲՈՆԱՍՏՆ» ՍՊԸ	+374 (10) 546 490, +374 (98) 944 449, +374 (93) 944 449 info@rvmconsult.am	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փող., 48/1 շենք

Բանկի համար ընդունելի ապահովագրական ընկերությունների ցանկ⁴

Արմենիա Ինշուրանս	+374 (11) 560 404, +374 (10) 560 404 +374 (99) 560 404 armeniainsurance.am/	ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պող 10, տարածք 1
Ինգո Արմենիա	+374 (10) 592 121 www.ingoarmenia.am/	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք՝ 47, 48, 50
Նաիրի Ինշուրանս	+ 374 (60) 500 060 www.nairi-insurance.am	ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 110 «Պիացցա Գռանդե» Քիզնես Կենտրոն
«ՌԵՍՈ» ապահովագրական ընկերություն	+374 (60) 275 757 www.reso.am	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62 շ., 93-93/1
Ռոսգոսստրախ-Արմենիա	+374 (10) 591 010, +374 (10) 500 770 www.rgs.am	ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
Սիլ Ինշուրանս	+374 (60) 540 000 http://www.silinsurance.am/	ՀՀ, ք. Երևան, Արամի փող., 3-րդ շենք «Սիլ Պլազա» առևտրի կենտրոնի շենքում

³ Անշարժ գույքի անկախ գնահատողների թարմացված ցանկը կարող եք գտնել www.hsbc.am կայքում

⁴ Ապահովագրական ընկերությունների թարմացված ցանկը կարող եք գտնել www.hsbc.am կայքում

Թողարկված է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամ, որն աշխարհի ֆինանսական և բանկային ծառայություններ տրամադրող խոշորագույն կազմակերպություններից մեկն է: Էյչ-Էս-Բի-Սի Խմբի միջազգային ցանցը ներառում է 63 երկիր և տարածաշրջան:

www.business.hsbc.am

+374 60 655 200

Իրավաբանորեն հաստատված է

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66
Գրանցման համար 67

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2023

Բոլոր իրավունքները պահպանված են: